

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/1

23 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ՆՆԱ» ՍՊԸ 24.11.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 10.11.2014 թ-ի թիվ 5010709 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 24.09.2014 թ-ի թիվ 5010709 հանձնարարգրի համաձայն «ՆՆԱ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 10.11.2014 թ-ի թիվ 5010709 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 27.519.648 դրամ:

Նշվեց նաև, որ սույն գործի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 10.12.2014 թ-ին հարուցվել է թիվ 83167814 քրեական գործը, որի նախաքննությունն իրականացվում է ՀՀ ՖՆ քննչական վարչության կողմից:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83167814 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՆՆԱ» ՍՊԸ բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«ՆՆԱ» ՍՊԸ 24.11.2014 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

